

ՀՀ «Կատարողական վարույթի մասին» նոր օրենքը. իրավական կարգավորման արդի մոտեցումները և կիրառման առանձնահատկությունները

Ներածություն

Թեմայի հիմնավորումը և արդիականությունը

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դատական և հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի կատարողականության արդյունավետության բարձրացումը մշտապես գտնվել է օրենսդրական բարեփոխումների կենտրոնում:

Արդարադատության և իրավական պետության կայացման առանցքային ցուցանիշներից է դատական ակտերի արդյունավետ, անկողմնակալ և սեղմ ժամկետներում կատարումը: Ինչպես բազմիցս արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), դատական ակտի կատարումը հանդիսանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված «արդար դատաքննության իրավունքի» անբաժանելի մասը: Առանց գործուն և կենսունակ հարկադիր կատարման համակարգի՝ դատական իշխանության կողմից արձակված վճիռները կորցնում են իրենց իրավական արժեքը՝ վերածվելով սոսկ «դեկլարատիվ թղթերի»:

Հայաստանի Հանրապետությունում երկար տարիներ գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը, չնայած կրած բազմաթիվ փոփոխություններին, այլևս չէր համապատասխանում արդի իրավահարաբերությունների զարգացման տեմպերին և քաղաքացիական շրջանառության ճկունությանը: Հին համակարգը բնութագրվում էր չափից ավելի բյուրոկրատացվածությամբ, դատարանների գերծանրաբեռնվածությամբ (նույնիսկ այնպիսի հարցերում, որտեղ կողմերը վեճ չունեին) և պարտապանի նկատմամբ միակողմանի և կոշտ վարչարարությամբ:

2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Կատարողական վարույթի մասին» ՀՀ նոր օրենքը արմատական հեղափոխություն է իրավական կարգավորման մոտեցումներում: Այս հետազոտության արդիականությունը պայմանավորված է հետևյալ հիմնարար գործոններով.

1. Հայեցակարգային նոր մոտեցում (Տնտեսական խթաններ). Նոր օրենքը պատժիչ վարչարարությունից անցում է կատարում դեպի տնտեսական խրախուսման մեխանիզմների:
2. Դատական համակարգի բեռնաթափում և թվայնացում. Կատարողական թերթի ինստիտուտի վերացումը (սեպտեմբեր 1, 2026 թ.) և անցումը ամբողջությամբ էլեկտրոնային տվյալների փոխանակմանը դատարանների և ՀԿԱԾ-ի միջև, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ ժամանակացույցերի սահմանումը հարկադիր կատարողի կողմից՝ ուղղակիորեն առնչվում են պետական ապարատի օպտիմալացմանը:
3. Մարդու իրավունքների և լավագույն շահի գերակայություն. Երեխաների հետ կապված վարույթներում ֆիզիկական և հոգեբանական հարկադրանքի բացարձակ

արգելքի ներդրումը և մանկավարժ-փորձագետների ինստիտուտի հստակեցումը արդիականացնում են ընտանեկան իրավունքից բխող դատական ակտերի կատարման հումանիստական ասպեկտները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն է համակողմանիորեն վերլուծել «Կատարողական վարույթի մասին» ՀՀ նոր օրենքի իրավական կարգավորման արդի մոտեցումները, վեր հանել դրա կիրառման առանձնահատկությունները անցումային շրջանում, գնահատել նոր ներդրված ինստիտուտների արդյունավետությունը և մշակել տեսական ու գործնական առաջարկություններ՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր հակասությունները և բացերը վերացնելու համար:

Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կատարողական վարույթի՝ որպես վարչական վարույթի հատուկ տեսակի իրավական բնույթը և վերլուծել պատշաճ վարչարարության սկզբունքների ու հարկադիր կատարողի ակտերի ընդլայնված իրավական կարգավիճակի ազդեցությունը վարույթի թափանցիկության վրա:
- Համեմատել նախկինում գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի և օրենքի դրույթները՝ վերհանելով պատասխանատվության համակարգի փոխակերպումը «պատժիչ» մոդելից դեպի կատարումը խթանող ճկուն մեխանիզմների:
- Հետազոտել կատարողական վարույթի սուբյեկտային կազմի ընդլայնման միտումները, մասնավորապես՝ «գրանցող մարմինների» ու «պարտապանի կոնտրագենտների» նոր ինստիտուտների ներդրման ֆունկցիոնալ անհրաժեշտությունը:
- Ուսումնասիրել ոչ դրամական պահանջները չկատարելու համար նախատեսված տուժանքի (աստրենտի) իրավական բնույթը, ծագման միջազգային փորձը (ֆրանսիական, գերմանական, իտալական մոդելներ) և վերլուծել ՀՀ-ում դրա ներդրման հետ կապված նոր կարգավորումները:
- Հետազոտել կատարողական ծախսերի ու վճարների նոր, տարբերակված սանդղակների տնտեսական ազդեցությունը պարտապանին կամովին կատարման մղելու հարցում:

Մեթոդաբանական մոտեցումներ

Հետազոտության իրականացման հիմքում ընկած է համակարգային-կառուցվածքային մեթոդը, որի միջոցով կատարողական վարույթի սուբյեկտային կազմը և աստրենտի ինստիտուտը դիտարկվում են որպես փոխկապակցված ամբողջություն իրավական համակարգում:

Համեմատական-իրավաբանական մեթոդի կիրառմամբ զուգահեռներ են անցկացվում նախկինում գործող և նոր «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքների միջև:

Իրավական մեկնաբանության և վերլուծական մեթոդների շնորհիվ բացահայտվում է օրենսդրի իրական կամքը՝ կապված պարտապանի կոնտրագենտների վերահսկողության

ու դատական տույժի չափերի սահմանման հարցում դատական հայեցողության սահմանափակման հետ:

Միջազգային համեմատական մեթոդի միջոցով ուսումնասիրվում են ոչ դրամական պահանջների չկատարման դեմ ուղղված անուղղակի հարկադրանքի ֆրանսիական, գերմանական ու իտալական հայեցակարգային մոդելները և դրանց տեղայնացման առանձնահատկությունները հետխորհրդային տիրույթում:

Պատմաիրավական և գործառնական մեթոդների համակցմամբ գնահատվում են աստրենտի ներդրման հետ կապված դոկտրինալ հակասությունները և դրանց ազդեցությունը պրակտիկայում կողմերի շահերի ողջամիտ հավասարակշռման ու արդարադատության արդյունավետության բարձրացման վրա:

Կատարողական վարույթի իրավական բնույթը և սուբյեկտային կազմը

Ուսումնասիրությունը սկսելով հենց նոր օրենքի ընդհանուր դրույթներից՝ առաջին հերթին ակնառու է, որ հստակորեն սահմանվել է կատարողական վարույթի իրավական բնույթը՝ այն որակելով որպես վարչական վարույթի հատուկ տեսակ: Մա սկզբունքային նշանակություն ունեցող դրույթ է, քանի որ նախկինում կատարողական վարույթի տեղն ու դերը իրավունքի համակարգում հաճախ հանդիսանում էին գիտական և գործնական բանավեճերի առարկա: Վարույթի ներկայիս կարգավիճակը թույլ է տալիս հարկադիր կատարման ընթացակարգերի վրա ուղղակիորեն տարածել պատշաճ վարչարարության հիմնարար սկզբունքները, սահմանել նոր, առավել թափանցիկ գործավարության կանոններ և ամբողջ գործընթացը դարձնել կանխատեսելի ու վերահսկելի վարույթի մասնակիցների համար:

Ընդհանուր դրույթների մեջ ներառված է նաև այն ակտերի ցանկը¹, որոնք ենթակա են հարկադիր կատարման: Այս շրջանակի հստակեցումը կարևոր առաջընթաց է կատարողական իրավահարաբերությունների համար, քանի որ չնայած նախկին օրենքը պարբերաբար փոփոխությունների արդյունքում ավելացնում էր այս ցանկը, սակայն հստակեցման անհրաժեշտությունը մնում էր արդիական: Բացի այդ՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի շրջանակի հստակ, համակարգված իրավական կանոնակարգումն ապահովում է կատարողական վարույթի արդյունավետությունը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի խմբագրության և «Կատարողական վարույթի մասին» նոր իրավակարգավորումների 3-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս վերհանել այն հայեցակարգային միտումները, որոնցով առաջնորդվել է օրենսդիրը հանրային և մասնավոր իրավունքի կապակցման այս ինստիտուտը բարեփոխելիս:

Նոր օրենքով կատարվել է օրենսդրական տեքստի անհարկի ծանրաբեռնվածության հաղթահարում, ինչը լուծվել է վարչական և նոտարական ակտերի համակարգման ու կենտրոնացման միջոցով: Հին օրենսդրական կարգավորումը նախատեսում էր տարբեր գերատեսչությունների կողմից արձակվող ակտերի կոնկրետացված և չափազանց ծավալուն թվարկում: Մասնավորապես, առանձին-առանձին սահմանվում էին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տեսչական մարմինների որոշումները կամ անօրինական շինությունների քանդման մասին վարչական ակտերը: Նոր տարբերակում օրենսդիրը որդեգրել է ամբողջական մեթոդ՝ բոլոր նմանատիպ իրավական ակտերը միավորելով մեկ միասնական ձևակերպման մեջ՝ «վարչական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում»: Այս կառուցակարգային անցումն ապահովում է օրենքի դինամիկ կայունությունը, քանի որ իրավական համակարգում նոր վարչական կամ նոտարական ակտերի տեսակների ներդրման պարագայում այլևս կարիք չի առաջանա փոփոխություններ կատարել կատարողական օրենսդրության հոդվածում:

Հետազոտության համար առանձնակի արժեք ունի դատական պաշտպանության միջոցների օպերատիվության բարձրացման հարցը, որը նոր խմբագրությունում ստացել է

¹ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 3

սկզբունքային նոր դրսևորում՝ սնանկության և միջանկյալ դատական ակտերի ներառման միջոցով: Ի տարբերություն հին կարգավորման, որտեղ սնանկության վարույթի շրջանակներում կայացվող ակտերը հիմնականում բացառություն էին կազմում ընդհանուր կանոնից և դուրս էին մնում հարկադիր կատարման տիրույթից, նոր խմբագրությամբ հստակ և անվերապահորեն սահմանվել է, որ հարկադիր կատարման ենթակա են սնանկության գործերով կատարում ենթադրող եզրափակիչ դատական ակտերը: Բացի այդ, հարկադիր կատարման ենթակա ակտերի ցանկն ընդլայնվել է միջանկյալ դատական ակտերով (օրենքով նախատեսված դեպքերում): Այս նորամուծության նպատակն է երաշխավորել հայցի ապահովման կամ այլ հրատապ դատավարական միջոցների անհապաղ և անխոչընդոտ իրականացումը՝ կանխելով հնարավոր իրավախախտումներն ու գույքի տնօրինումը մինչև գործի էությանը վերաբերող վերջնական դատական ակտի կայացումը:

Նոր իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը վկայում է նաև հարկադիր կատարման ենթակա ակտերի աղբյուրների ինստիտուցիոնալ ընդլայնման մասին, քանի որ ցանկում ավելացվել են սկզբունքորեն նոր սուբյեկտներ: Նոր խմբագրությամբ հարկադիր կատարման ենթակա ակտերի թվում ներառվել են Սահմանադրական դատարանի որոշումները, ինչը բարձրացնում է սահմանադրական արդարադատության իրավական ուժի և դրանց կատարման երաշխավորվածության մակարդակը երկրում: Զուգահեռաբար, վարչարարության արդյունավետության համատեքստում խիստ հեռանկարային է հենց հարկադիր կատարողի սեփական որոշումների ներառումը հիմնական ցանկում, օրինակ՝ կատարողական գործողությունների ծախսերի բռնագանձման մասով: Նշված փոփոխությունը վերացնում է նախկինում առկա կիրառական բարդությունները՝ թույլ տալով վարույթի ծախսերի փոխհատուցման հարցերը լուծել հենց նույն վարույթի շրջանակներում՝ առանց հավելյալ դատական վարույթների հարուցման²:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ալտերնատիվ և օտարերկրյա արդարադատության ակտերի նկատմամբ պետական դատական վերահսկողության հստակեցումը: Եթե հին կարգավորումներում արբիտրաժային տրիբունալների, ֆինանսական համակարգի հաշտարարի կամ օտարերկրյա դատական ակտերի հարկադիր կատարման սխեմաներն օժտված էին անհստակ ընթացակարգերով և լուրջ ընդհանրական հղումներով, ապա նոր կարգավորմամբ օրենսդիրն ուղղակիորեն ընդգծել է դատական վերահսկողության սահմանադրական դերը: Սահմանվել է, որ վերոնշյալ բոլոր ակտերը հարկադիր կատարման են ենթարկվում բացառապես պետական դատարանի կողմից դա թույլատրված լինելու պարագայում կամ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում, ինչը հանդիսանում է անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Այս նոր իրավական փոփոխություններին հաջորդում է վարույթի սուբյեկտների կազմի վերանայումը: Նոր օրենքի երկրորդ գլխում կանոնակարգվում են կատարողական վարույթի մասնակիցների շրջանակները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Այստեղ ևս տեղի են ունեցել փոփոխություններ նախկին օրենքի

² Տե՛ս նույն տեղում

համեմատությամբ՝ առավելապես ընդլայնելով և համակարգելով վարույթի սուբյեկտային կազմը:

Ի տարբերություն հին օրենսդրական կարգավորումների³, որտեղ «մասնակիցներ» հասկացությունը սահմանափակվում էր գրեթե միայն կողմերով (պահանջատեր և պարտապան) ու նրանց ներկայացուցիչներով, նոր օրենքը ներդնում է «կատարողական վարույթի սուբյեկտների կազմը» ավելի ընդգրկուն հասկացությունը⁴: Օրենսդիրը կիրառել է հիերարխիկ դասակարգման մեթոդը՝ սուբյեկտներին բաժանելով հստակ խմբերի, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմին, մասնակիցներ, իրավասու և օժանդակող մարմիններ, գրանցող մարմիններ և պարտապանի կոնտրագենտներ:

Առանձնակի ուշադրության է արժանի առավելապես «պարտապանի կոնտրագենտներ» և «գրանցող մարմիններ» ինստիտուտների ամրագրումը⁵: Ժամանակակից տնտեսական հարաբերությունների զարգացումը և թվայնացումը հանգեցրել են նրան, որ պարտապանների ակտիվները վաղուց դուրս են եկել միայն անշարժ գույքի կամ բանկային հաշիվների սահմաններից: Նոր օրենքը հաշվի է առել այս իրողությունը՝ տեղեկատվության հավաքագրման և արգելանքների կիրառման տեսադաշտ բերելով այնպիսի ոլորտներ, որոնք նախկինում դուրս էին մնում հարկադիր կատարողի ուղղակի վերահսկողությունից: Նոր իրավակարգավորմամբ՝ տեղեկությունների փաթեթը և պարտավորությունների շրջանակը տարածվում են նաև այնպիսի սուբյեկտների վրա, ինչպիսիք կարող են լինել թվային և էլեկտրոնային դրամապանակներ սպասարկող կազմակերպությունները (էլեկտրոնային փողեր, վիրտուալ ակտիվներ), խաղային ոլորտի սուբյեկտները (բուքմեյքերական ընկերություններ, առցանց խաղատներ), որտեղ պարտապանները կարող են ունենալ ակտիվ հաշիվներ և զգալի դրամական միջոցներ, պարտապանի բիզնես գործընկերները, որոնք տիրապետում են պարտապանի գույքին կամ նրան դրամական միջոցներ վճարող/ստացող են հանդիսանում: Այս ամբողջացվել է կոնտրագենտների խմբի ներքո: Այս համատեքստում օրենսդրական կարևորագույն նորամուծություն է նաև գրանցող մարմինների և պարտապանի կոնտրագենտների համար բարեխղճորեն գործելու ուղղակի պարտականության սահմանումը: Նրանք օրենքի ուժով պարտավոր են որևէ կերպ չնպաստել պարտապանի կողմից պարտավորությունների կատարումից խուսափելուն, ինչպես նաև հարկադիր կատարողի պահանջով անվերապահորեն տրամադրել պահանջվող ողջ տեղեկատվությունը:

Կատարողական վարույթի սուբյեկտային կազմի (պարտապանի կոնտրագենտների) շրջանակի ընդլայնման մեկ այլ կարևորագույն և ֆունկցիոնալ նպատակ է հանդիսանում տարանցիկ հաշիվներով և դրամական փոխանցումների համակարգերով իրականացվող գործարքների նկատմամբ լիարժեք իրավական վերահսկողության սահմանումը: Իրավակիրառ պրակտիկայում հաճախ են արձանագրվում դեպքեր, երբ արտերկրից պարտապանի անունով ուղարկված դրամական միջոցները միտումնավոր չեն մուտքագրվում վերջինիս ավանդական (ընթացիկ կամ ավանդային) բանկային հաշիվներին: Փոխարենը՝ այդ ակտիվները ձևակերպվում են որպես

³ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենք, հոդված 6

⁴ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 4

⁵ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 18

արագ դրամական փոխանցումներ՝ առանց բանկային հաշվի բացման, կամ ժամանակավորապես կայանում են բանկային կազմակերպությունների տարանցիկ (միջանկյալ) հաշիվներում: Նախկինում գործող կարգավորումների պայմաններում հարկադիր կատարողի ավտոմատացված համակարգերը տեխնիկապես և իրավական գործիքակազմի սահմանափակության պատճառով ի վիճակի չէին նույնականացնել, «որսալ» և արգելանքի տակ դնել նմանատիպ դրամական հոսքերը: Սա պարտապանների համար ստեղծում էր իրավական արտոնյալ պայմաններ՝ անարգել ստանալու և տնօրինելու թաքցված նշված ակտիվները՝ խուսափելով գույքային պատասխանատվությունից: Օրենսդրական նոր փոփոխությունների համատեքստում, քանի որ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և վճարահաշվարկային սուբյեկտները նույնպես դասվում են պարտապանի կոնտրագենտների (վարույթին աջակցող անձանց) շրջանակին, նախկինում առկա այս օրենսդրական բացը լիարժեքորեն լրացվում է: Արդյունքում՝ առանց հաշվի բացման իրականացվող տրանսֆերտներն ու տարանցիկ հաշիվներում առկա միջոցները վերածվում են իրավականորեն հասանելի և բռնագանձման ենթակա օբյեկտների, ինչն էապես բարձրացնում է կատարողական վարույթի ընդհանուր արդյունավետությունը:

Կատարողական վարույթի արմատական բարեփոխումների համատեքստում առանցքային նշանակություն ունի դատավարական սուբյեկտների իրավունքների ընդլայնումն ու դրանց իրացման երաշխիքների կատարելագործումը: Նոր օրենսդրությամբ կատարողական վարույթի մասնակիցների համար սահմանվում են սուբյեկտիվ իրավունքների լայն շրջանակ, ինչը նպատակ ունի ապահովելու վարույթի թափանցիկությունն ու կողմերի իրավահավասարությունը: Մասնավորապես, վարույթի մասնակիցներին օրենսդրորեն երաշխավորվում է վարույթի նյութերին ամբողջությամբ ծանոթանալու, անձամբ կամ ներկայացուցչի միջոցով կատարողական գործողություններին ուղղակիորեն մասնակցելու, տարաբնույթ միջնորդություններ ներկայացնելու, ինչպես նաև օրենքով սահմանված դատական կամ վերադատության կարգով հարկադիր կատարողի որոշումներն ու գործողությունները բողոքարկելու հնարավորություն⁶:

Միևնույն ժամանակ օրենքը խորքային և մանրամասն կարգավորման է ենթարկել ներկայացուցչի լիազորությունների իրացման կառուցակարգերը⁷: Սա հանգեցրել է կատարողական վարույթում փաստաբանի (ներկայացուցչի) ֆունկցիոնալ դերի հայեցակարգային փոփոխության: Քանի որ նոր իրավակարգավորումներով ընձեռվում է ապացույցների բաշխման, հավաքագրման և ներկայացման լայն իրավական հնարավորություն, փաստաբանական գործունեության համար ստեղծվում է լայնածավալ մասնագիտական դաշտ: Նոր համակարգը ներկայացուցչից պահանջում է բացառապես ակտիվ գործունեության իրականացում, որը պետք է դրսևորվի հարկադիր կատարմանը հակադրվող կամ աջակցող ապացույցների հավաքագրման, ներկայացվող միջնորդությունների իրավական հիմնավորման բոլոր փուլերում:

⁶ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 7

⁷ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 10, 11

Կարևորագույն նորամուծություն է օրենքի 6-րդ հոդվածով հարկադիր կատարողին ընձեռված իրավասությունը՝ երրորդ անձանց (իրենց դիմումի համաձայն) ներգրավել կատարողական վարույթին, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ որոշել այլ անձանց կամ մարմինների ներգրավման հարցը: Սա ուղղակիորեն լուծում է պրակտիկայում տարիներ շարունակ գոյություն ունեցող այն արատավոր խնդիրը, երբ այս կամ այն պետական մարմինը հրաժարվում էր կատարել գործողությունը՝ պատճառաբանելով, թե կատարողական վարույթում կամ դատական ակտում իրեն վերաբերող կոնկրետ կետ չկա: Օրինակ երբ անձի սեփականության իրավունքը վերականգնվել է դատական ակտով, բայց Կադաստրի կոմիտեն մերժում է իրավունքի գրանցումը, քանի որ դատական ակտը ուղիղ իր վրա պարտավորություն չի դնում կատարելու որոշակի գործողություններ: Այս նոր փոփոխությամբ բարձրացված խնդիրը ստանում է իր իրավական լուծումը, քանի որ հարկադիր կատարողն այսուհետ իրավասու է վարույթում ուղղակիորեն ներգրավել հենց իրավասու մարմնին:

Կատարողական ծախսերի ինստիտուտը

Դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության բարձրացման հաջորդ կարևորագույն ուղղությունը կատարողական ծախսերի համակարգի արմատական վերանայումն է, որի առանցքային նպատակն է պարտատիրոջ և պարտապանի շահերի ողջամիտ հավասարակշռումը, ինչպես նաև կատարողական վարույթի փուլում պարտավորությունների արագ և նվազագույն ծախսատարությամբ կատարման խթանումը: Այս կոնստեքստում օրենսդիրը հրաժարվել է նախկինում գործող կատարողական ծախսերի միատարր ընկալումից և ներդրել է երկու հստակ իրավական հասկացություն, որոնցից առաջինը կատարողական վճարն է՝ պետական բյուջե վճարվող օրենքով սահմանված պարտադիր վճար, որն իրենից ներկայացնում է պետության կողմից վարույթի կազմակերպման համար սահմանված յուրօրինակ սանդղակ-հատուցում, իսկ երկրորդը՝ կատարողական գործողությունների կատարման համար ծախս արտահայտությունը, որը ենթադրում է հարկադիր կատարողի կողմից կոնկրետ գործողությունների իրականացման, օրինակ՝ գույքի տեղափոխման, պահպանման, կազմակերպման կամ այլ վճարումների ընթացքում փաստացի կատարված ծախսումները:

Նախկին օրենսդրական կարգավորումների համաձայն՝ կատարողական վարույթի հարուցման պահից պարտքին ավտոմատ կերպով ավելանում էր ֆիքսված տոկոս կատարողական ծախս՝ անկախ նրանից, թե բռնագանձումը վարույթի որ փուլում կամ երբ տեղի կունենար, ինչը պարտապանի մոտ վերացնում էր պարտավորությունը շուտափույթ մարելու մոտիվացիան, քանի որ վճարման ժամկետը չէր ազդում ծախսի չափի վրա⁸: Բացի այդ, քիչ չեն եղել դեպքերը, երբ փաստացի կատարած գործողությունների արժեքը և ծախսերը գերեզանցել են բռնագանձվող գումարի ֆիքսված տոկոսը⁹: Նոր օրենսդրությամբ ներդրվել է ծախսերի ճկուն, տարբերակված սանդղակ, որն ուղղված է պարտապանի կողմից պարտավորության կամովին կատարմանը, քանի որ վարույթն արդեն հարուցված է, սակայն ենթադրում է պարտապանի գիտակցված համագործակցություն:

Դրամական պահանջների պարագայում օրենսդիրը սահմանել է հստակ սանդղակներ, որոնց համաձայն՝ մինչև տասը հազար դրամի բռնագանձման պարագայում կատարողական վճարը կազմում է գանձման ենթակա գումարի հիստին տոկոսը, իսկ դրանից հետո մինչև հարյուր հազար դրամի դեպքում սահմանվում է կայուն վճար՝ հինգ հազար դրամի չափով¹⁰: Այն դեպքում, երբ առկա է հարյուր հազար դրամը գերազանցող պահանջ և գումարի գանձումն իրականացվում է անկանխիկ միջոցներից, օրինակ՝ բանկային հաշիվների արգելադրման համակարգով, կայուն վճարին ավելանում է նաև կարատողական ծախսը: Վարույթի հարուցման առաջին երկու շաբաթվա ընթացքում վճարի չափը կազմում է ընդամենը երկու տոկոս, իսկ երկշաբաթյա ժամկետից հետո

⁸ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 67

⁹ «Կատարողական վարույթի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման և հիմնավորում

¹⁰ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս

վճարելու կամ բռնագանձվելու դեպքում չափն ավելանում է՝ դառնալով չորս տոկոս¹¹։ Նույն տրամաբանությամբ օրենքը խթանում է նաև կատարողական վարույթի փուլում հաշտության համաձայնության կնքումը, քանի որ եթե կողմերը գալիս են համաձայնության վարույթի հարուցման առաջին երկու շաբաթում, վճարը կրկին կազմում է երկու տոկոս, իսկ դրանից հետո՝ չորս տոկոս։ Մակայն, եթե խոսքը գնում է կանխիկ գումարի բռնագանձման մասին, որը պահանջում է հարկադիր կատարողի ավելի մեծածավալ գործողություններ, կատարողական վճարը սահմանվել է հինգ տոկոս¹², իսկ երբ պարտապանը դրսևորում է դիմադրություն կամ պասիվություն, կամ պարտապանի գույքի իրացման պարագայում, հարկադիր աճուրդով իրացված գույքի գնից գանձվում է առավելագույն՝ տասը տոկոս վճար, բայց ոչ ավելի, քան գանձման ենթակա հիմնական գումարի տասը տոկոսի չափով¹³։

Ոչ դրամական բնույթի պահանջների կատարման մասով նույնպես նախատեսված է եռաստիճան սանդղակ, որտեղ հաշվարկի հիմքում դրված է կատարված փաստացի ծախսերի եռապատիկի տրամաբանությունը, մասնավորապես՝ մինչև հինգ հարյուր հազար դրամ արժեքով գործերով վճարը կազմում է կատարած փաստացի ծախսերի եռապատիկը, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամը, այսինքն առնվազն պետք է կինի 100 հազար դրամ։ Իսկ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամի դեպքում՝ 1.500.000 դրամ, ինչպես նաև մեկ միլիոն դրամը գերազանցող պահանջներով կրկին կիրառվում է ծախսի 150 տոկոսի չափը¹⁴։

Օրենսդրության մեջ հստակ կարմիր թելով անցնում է պատասխանատվության և մեղավորության իրավական սկզբունքը, քանի որ հարկադիր կատարման գործընթացը ձեռնարկվել և նախաձեռնվել է պարտապանի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքով, հետևաբար կատարողական վճարների և ծախսերի հատուցման բեռը, որպես կանոն, կրում է պարտապանը, և այդ վճարը գանձվում է հարկադիր կատարողի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա անհրաժեշտության դեպքում կարող է հարուցվել նոր կատարողական վարույթ։ Այնուամենայնիվ, օրենքը նախատեսում է բացառիկ դեպքեր, երբ ծախսերի հատուցման պարտականությունը փոխանցվում է պահանջատիրոջը, ինչը տեղի է ունենում այն պարագայում, երբ վարույթի բնականոն ընթացքն ընդհատվում կամ ավարտին չի հասնում հենց պահանջատիրոջ վարքագծի պատճառով, օրինակ՝ երբ վերջինս հրաժարվում է իր ներկայացրած դիմումից կամ հրաժարվում է վերցնել արդեն իսկ բռնագանձված գույքը կամ դրամական միջոցները։ Այսպիսով, կատարողական ծախսերի ինստիտուտի վերանայումը և տարբերակված կատարողական վճարների ներդրումը հանդիսանում է լուրջ տնտեսական լծակ, որը թեթևացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծանրաբեռնվածությունը, կանխում է պարտապանների արհեստական ու երկարատև դիմադրությունը և պարտադրում է վերջիններիս ցուցաբերել պատասխանատու վարքագիծ՝ գործընթացից նվազագույն ֆինանսական կորուստներով դուրս գալու համար։

¹¹ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մաս, կետ 3

¹² «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս 4

¹³ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս 5

¹⁴ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մաս

Այս ամենին զուգահեռ, անցումային դրույթների տրամաբանությամբ, օրենսդիրը հստակ տարանջատում է դրել նոր և հին կանոնների կիրառման ժամանակային սահմանների միջև՝ կանխելով հնարավոր իրավական խառնաշփոթը: Սահմանված է, որ կատարողական ծախսերի հատուցման և կատարողական վճարների գանձման նոր կարգավորումները կիրառվում են միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված վարույթների և դրանց շրջանակներում կայացված որոշումների հարկադիր կատարման դեպքում: Սակայն այստեղ արվում է սկզբունքային բացառություն. նոր կանոնները չեն տարածվում այն կատարողական վարույթների վրա, որոնք նախկինում ավարտվել էին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (այն է՝ պահանջատիրոջ դիմումի համաձայն) և վերսկսվել են նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված դիմումների հիման վրա: Այս և մնացած բոլոր այլ վարույթների դեպքում շարունակում են գործել 1998 թվականի օրենքով սահմանված կատարողական ծախսերի հատուցման նախկին կանոնները:¹⁵ Սահմանակում է, որ պետությունը որդեգրել է իրավական որոշակիության և հետադարձ ուժի արգելքի սկզբունքը՝ թույլ չտալով, որ նախկինում ձևավորված իրավահարաբերություններից բխող վարույթների վերսկսման դեպքում պարտապանի համար անկանխատեսելիորեն փոխվեն ֆինանսական պատասխանատվության (կատարողական վճարների) չափերն ու պայմանները:

¹⁵ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 123

Տուժանքը ոչ դրամական պահանջը չկատարելու համար (աստրենտ)

«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքում հիմնովին փոփոխվել է պատասխանատվության կարգը կատարողական վարույթի շրջանակներում: Ուժը կորցրած օրենքը պատասխանատվության ինստիտուտը սահմանում էր ավելի վերացական և ընդլայնված՝ հստակ լուծումներ չտալով այն դեպքերին, երբ կատարողական վարույթի շրջանակներում վարույթի մասնակիցների կողմից չէին պահպանվում օրենքի պարտադիր պահանջները կամ չէին կատարվում հարկադիր կատարողի որոշումները:

Մասնավորապես նախկին օրենքում կատարողական վարույթի ժամանակ թույլ տված խախտումների համար պատասխանատվության ինստիտուտի հիմքում դրված էր հարկադիր կատարողի որոշումների պարտադիրությունը¹⁶:

Այս համատեքստում, օրենքը հստակորեն տարանջատում էր վարչական և քրեական պատասխանատվության հիմքերը: Հարկադիր կատարողին իրավունք էր վերապահված սեփական որոշմամբ կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ, եթե քաղաքացին կամ պաշտոնատար անձը դիտավորյալ չէին կատարում նրա որոշումները, խոչընդոտում էին վարույթի ընթացքին կամ դիմադրություն էին ցույց տալիս: Վարչական տույժերի կիրառման հատուկ հիմք էր դիտարկվում նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի ու գույքային իրավունքների կազմի և քանակի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելը, դրանում տվյալներ թաքցնելը կամ խեղաթյուրելը: Մակայն, եթե խախտումները դուրս էին գալիս վարչական տիրույթից և վերածվում էին հարկադիր կատարողի կամ նրա մերձավորների հասցեին հնչող սպառնալիքների, նրանց կյանքի, առողջության, գույքի նկատմամբ բռնության կամ արատավորող տեղեկությունների տարածման, արարքն առաջացնում էր քրեական պատասխանատվություն: Նման իրավիճակներում հարկադիր կատարողը դիմում էր դատախազություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու միջնորդությամբ:

Միևնույն ժամանակ, օրենքը նախատեսում էր կարևոր իրավական երաշխիքներ պարտապանի իրավունքների պաշտպանության համար, հատկապես այն դեպքերում, երբ վարույթի հիմքում ընկած սկզբնական ակտը ճանաչվում էր անվավեր: Եթե կատարողական վարույթը կարճվում էր դատական ակտի բեկանման, նոտարական մակագրության թերթի ոչ իրավաչափ ճանաչման կամ կողմերի միջև կնքված նոտարական համաձայնագրի անվավերության հետևանքով, ապա վարույթի ընթացքում նշանակված տուգանքները չէին բռնագանձվում, իսկ արդեն իսկ բռնագանձված գումարները ենթակա էին վերադարձման պետական բյուջեից:

Հին օրենսդրական համակարգի ամենախիստ և յուրահատուկ դրույթներից մեկը վերաբերում էր երրորդ անձանց, մասնավորապես՝ ֆինանսական կազմակերպություններին: Քանի որ դրամական միջոցների բռնագանձման գործընթացն ուղղակիորեն կախված էր բանկային համակարգի օպերատիվությունից, օրենքը սահմանում էր, որ պարտապանի հաշիվները սպասարկող բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված դրամական միջոցների բռնագանձման պահանջները չկատարելը հիմք էր հանդիսանում հարկադիր կատարողի

¹⁶ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասի» ՀՀ օրենք, հոդված 71

կողմից այդ բանկին տուգանելու համար: Տուգանքի չափը բավականին բարձր էր և կազմում էր բռնագանձվող գումարի ուղիղ հիստուն տոկոսը, ինչը ֆինանսական կառույցների համար ստեղծում էր խիստ պատասխանատվության գոտի և ստիպում անվերապահորեն ենթարկվել հարկադիր կատարման ծառայության պահանջներին¹⁷:

Այսպիսով, հին օրենքի տրամաբանությունը հիմնված էր հիմնականում ֆիքսված, մեկանգամյա վարչական տուգանքների, քրեականացման և երրորդ անձանց նկատմամբ կոշտ պատժամիջոցների կիրառման վրա, ինչն ապահովում էր կատարողական գործողությունների ընդհանուր վարչարարությունը, սակայն զուրկ էր պարտապանին աստիճանաբար խթանող ճկուն մեխանիզմներից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները կրում էին զուտ «պատժիչ» բնույթ և անարդյունավետ էին, քանի որ չէին ծառայում իրենց գլխավոր նպատակին՝ պարտապանին ստիպել կամ առավելապես խրախուսել կատարել դատական ակտը: Մեկանգամյա տուգանքը կիրառելուց հետո հարկադիր կատարողը չունեւր ազդեցության ճկուն մեխանիզմներ, ինչի պատճառով վարույթները հաճախ մտնում էին փակուղի:

Նոր օրենսդրության հիմնական նպատակը պատասխանատվությունը պատժիչ վերածելն է կատարումը խթանող և պարտապանի վրա աստիճանական ճնշում գործադրող արդյունավետ գործիքի:

Այս փոփոխությունն առաջին հերթին արտահայտվում է հարկադիր կատարողի արձակած ակտերի իրավական կարգավիճակի ընդլայնմամբ: Եթե հին օրենքի 71-րդ հոդվածով պարտադիր ուժ ունեին միայն հարկադիր կատարողի որոշումները, ապա նոր օրենքի 115-րդ հոդվածով համապարտադիր բնույթ են ստացել նաև նրա «պահանջներն ու հանձնարարականները»: Օրենսդիրը նաև հստակեցրել է սուբյեկտների կազմը՝ «կազմակերպություններ և քաղաքացիներ» ընդհանրական ձևակերպումը փոխարինելով «ֆիզիկական և իրավաբանական անձինք» տերմիններով: Սա նշանակում է, որ ցանկացած ընթացիկ գրավոր հանձնարարականի չկատարումն այժմ ավելի արագ և ուղղակիորեն է հանգեցնում պատասխանատվության հարուցման՝ զգալիորեն ուժեղացնելով հարկադիր կատարողի դիրքերը վարույթի ողջ ընթացքում:

Ամենաարմատական հայեցակարգային տարբերությունը վերաբերում է իրավախախտումների որակմանը և պատասխանատվության կիրառման վարչարարությանը, ինչը երևում է հին օրենքի 72-րդ և նոր օրենքի 116-րդ հոդվածների համեմատությունից: Հին համակարգն ուներ սահմանափակող բնույթ. այն թույլ էր տալիս վարչական տույժ կիրառել միայն կոնկրետ թվարկված մի քանի արարքների համար (դիտավորյալ չկատարելը, խոչընդոտելը կամ հայտարարագիր չներկայացնելը): Բացի այդ, հին օրենքը պարունակում էր բանկերի համար խիստ ֆիքսված պատժամիջոց (Հոդված 73)՝ բռնագանձվող գումարի ուղիղ 50 տոկոսի չափով, և պարտապանի համար երաշխիք (Հոդված 72.1)՝ սկզբնական դատական ակտի բեկանման դեպքում տուգանքների չեղարկման վերաբերյալ: Մինչդեռ նոր օրենքի 116-րդ հոդվածը որդեգրել է լայն և համակարգային մոտեցում: Այն սահմանում է, որ պատասխանատվության մեխանիզմը գործարկվում է, եթե վարույթի սուբյեկտների կամ ցանկացած այլ անձանց գործողությունը

¹⁷ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 73

կամ անգործությունը պարունակում է վարչական կամ քրեական իրավախախտման հատկանիշներ: Հարկադիր կատարողն այլևս կաշկանդված չէ միայն մի քանի կոնկրետ խախտումներով:

Նոր օրենքով հստակ դասակարգվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության լիազորությունները երեք ուղղություններով: Առաջին՝ նա իր սեփական որոշմամբ կիրառում է վարչական պատասխանատվություն, եթե այդ իրավասությունն օրենքով վերապահված է իրեն: Երկրորդ՝ ներդրվել է բոլորովին նոր գործիք, որով հարկադիր կատարողին իրավունք է տրվել նախաձեռնել այլ իրավասու մարմինների կողմից վարչական վարույթ հարուցելու ընթացակարգ, եթե խախտումը դուրս է իր անմիջական իրավասությունից: Երրորդ՝ քրեական տարրեր հայտնաբերելու դեպքում դատախազություն դիմելու ընթացակարգը փոխարինվել է «առերևույթ հանցանքի մասին հաղորդում ներկայացնելու» ժամանակակից ընթացակարգով¹⁸:

«Կատարողական վարույթի մասին» օրենքում ներդրվել ներ ինստիտուտ, որը արմատապես փոխում է ոչ դրամական պահանջների կատարման կարգը: Ոչ դրամական (իրեղեն կամ ֆունկցիոնալ) պահանջների հարկադիր կատարումը պատմականորեն հանդիսացել է կատարողական վարույթի ամենաբարդ և խնդրահարույց տիրույթներից մեկը: Ի տարբերություն դրամական բռնագանձումների, որոնք լուծվում են գույքի կամ բանկային հաշիվների սառեցման ավտոմատացված եղանակներով, ոչ դրամական պահանջների (օրինակ՝ որոշակի գործողություն կատարելը, տեղեկատվություն տրամադրելը կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալը) իրականացումն ուղղակիորեն կախված է պարտապանի կամքից և վարքագծից: Ոչ դրամական (իրեղեն կամ ֆունկցիոնալ) պահանջների հարկադիր կատարումը պատմականորեն հանդիսացել է կատարողական վարույթի ամենաբարդ և խնդրահարույց տիրույթներից մեկը: Ի տարբերություն դրամական բռնագանձումների, որոնք լուծվում են գույքի կամ բանկային հաշիվների սառեցման ավտոմատացված եղանակներով, ոչ դրամական պահանջների (օրինակ՝ որոշակի գործողություն կատարելը, տեղեկատվություն տրամադրելը կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալը) իրականացումն ուղղակիորեն կախված է պարտապանի կամքից և վարքագծից:

Այս ամենը լիովին համահունչ է նախագծի հիմնավորման մեջ նշված առանցքային նորամուծությունների հետ, որոնցից ամենակարևորը պարբերական տուգանքների ներդրումն է ոչ գույքային պահանջների դեպքում: Եթե պարտապանը շարունակում է չկատարել պահանջը, հարկադիր կատարողը կարող է յուրաքանչյուր հաջորդ խախտված ժամկետի (օրվա կամ շաբաթվա) համար նոր տուգանքներ նշանակել՝ ստեղծելով այնպիսի ֆինանսական բեռ, որ պարտավորությունը չկատարելը դառնա ոչ ձեռնտու: Հիմնավորման համաձայն՝ խստացվել է նաև գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականությունը խախտելու պատասխանատվությունը՝ կանխելու համար

¹⁸ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 116

պարտապանների կողմից սեփական միջոցները դիտավորյալ թաքցնելու կամ օտարելու արատավոր պրակտիկան¹⁹: Այսպիսով, եթե հին օրենքը կենտրոնացած էր հենց տեղում մեկանգամյա պատիժ կիրառելու վրա, ապա նոր օրենքը հարկադիր կատարողին դարձրել է իրավական համակարգի լիարժեք մասնակից, որն օգտագործում է պատասխանատվության ճկուն, պարբերական և համակարգային միջոցներ՝ վարույթի գլխավոր նպատակին՝ դատական ակտի իրական կատարմանը հասնելու համար:

Դատական արդարադատության արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշը ոչ միայն օրինական և հիմնավորված դատական ակտի կայացումն է, այլև դրա իրական, անխոչընդոտ և արագ կատարումը: Դատական վճիռների կատարման փուլը հանդիսանում է անձի դատական պաշտպանության հիմնարար իրավունքի տրամաբանական ավարտը, առանց որի արդարադատությունը կորցնում է իր իրավական և գործնական իմաստը: Սակայն, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, ավանդական հարկադիր կատարման գործիքները, ինչպիսիք են գույքի վրա արգելանք դնելը կամ դրա բռնագանձումը, հաճախ անգոր կամ անարդյունավետ են լինում, երբ դատական ակտով պարտապանի վրա դրվում է ոչ դրամական բնույթի որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու պարտավորություն: Այսպիսի իրավիճակներում կատարողական վարույթի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և պարտապանին կատարմանը մղելու նպատակով ժամանակակից իրավակարգերում ներդրվել են անուղղակի կամ խթանիչ հարկադրանքի մեթոդներ: Նմանատիպ միջոցները միաժամանակ կատարում են երկակի գործառույթ, քանի որ դրանք խթանում են պարտապանին հնարավորինս սեղմ ժամկետներում կատարել դատարանի պահանջը և միևնույն ժամանակ հանդիսանում են յուրօրինակ պատժամիջոց դատական ակտը չկատարելու կամ կետանցով կատարելու համար:

Անուղղակի հարկադրանքի համակարգում իր արդյունավետությամբ և ուրույն իրավական կառուցակարգով առանձնանում է աստրենտի կամ ոչ դրամական պահանջը չկատարելու համար տուժանքի ինստիտուտը: Աստրենտն իր դասական տեսքով հանդիսանում է ֆրանսիական դատական պրակտիկայի և պրետորական արդարադատության արդյունքը, որի արմատները հասնում են տասնիններորդ դարի վերջ: Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը հազար ութ հարյուր ութսունինը թվականի իր հայտնի որոշումներով սկսեց կիրառել դրամական տույժեր այն պարտապանների նկատմամբ, որոնք հրաժարվում էին կատարել դատարանի սահմանած ոչ դրամական պարտավորությունները: Իրավական դոկտրինում աստրենտը սահմանվում է որպես դատարանի կողմից նշանակվող դրամական սանկցիա, որը հաշվարկվում է պարտավորության չկատարման յուրաքանչյուր օրվա, շաբաթվա կամ ամսվա համար, և որի նպատակն է պարտապանի նկատմամբ ստեղծել այնպիսի տնտեսական ճնշում, որ նրան ձեռնտու լինի անհապաղ կատարել դատական ակտը, քան շարունակել անգործությունը²⁰:

¹⁹ «Կատարողական վարույթի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում

²⁰ Резина Н.А., Иванова Л.В. Астрент: проблемы применения // Вестник Омской юридической академии. — 2016. — № 1 (30). — էջ 20

Ժամանակակից փուլում աստրենտն իր ամրագրումն է գտել միջազգային պայմանագրային և հանձնարարական իրավունքի մի շարք հիմնարար փաստաթղթերում, ինչպիսիք են Եվրոպական պայմանագրային իրավունքի օրենսգիրքը և ՌԻՆԻԴՈՒԱ-յի Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները, ինչը վկայում է դրա համընդհանուր ճանաչման և արդյունավետության մասին²¹:

Միջազգային իրավական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական ակտերի չկատարման դեմ ուղղված անուղղակի հարկադրանքի մեթոդները զարգացել են մի քանի հիմնական հայեցակարգային մոդելներով, որոնցից առաջինը ֆրանսիական մասնավոր-իրավական ուղղվածությունն է: Ֆրանսիական իրավական մտածողության համաձայն՝ աստրենտը դիտարկվում է որպես մասնավոր անձի շահերի պաշտպանության միջոց, և դրա արդյունքում բռնագանձվող ողջ դրամական գումարը փոխանցվում է հոգուտ կրեդիտորի կամ պահանջատիրոջ: Սա հիմնավորվում է նրանով, որ հենց կրեդիտորն է կրում տնտեսական կամ բարոյական կորուստներ պարտապանի անգործության պատճառով, և այդ գումարը հանդիսանում է յուրօրինակ փոխհատուցում սպասման ժամանակահատվածի համար²²: Սրան սկզբունքորեն հակադրվում է գերմանական հանրային-իրավական մոդելը, որտեղ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատական ակտը չկատարելու համար սահմանվող դրամական տույժը կրում է բացառապես հանրային բնույթ: Գերմանական իրավական դոկտրինի հիմքում ընկած է այն գաղափարը, որ դատարանի հրամանը չկատարող անձը խախտում է պետության հանրային կարգը և արհամարհում է դատական իշխանությունը, հետևաբար, բռնագանձվող դրամական միջոցները գնում են բացառապես պետական բյուջե, այլ ոչ թե հայցվորին, իսկ անգործության շարունակման դեպքում դատարանն իրավասու է կիրառել անձնական ֆիզիկական հարկադրանք կամ դատական կալանք²³: Անգլո-ամերիկյան իրավական համակարգում դասական աստրենտի հասկացությունը բացակայում է, սակայն գործում է դատարանի նկատմամբ արհամարհանքի խիստ ինստիտուտը, որի շրջանակներում դատարանի ոչ դրամական հրամանը չկատարելը դիտարկվում է որպես իրավախախտում ընդդեմ արդարադատության և հանգեցնում է պատժիչ վնասների, գույքի ժամանակավոր բռնագրավման կամ անժամկետ բանտարկության, մինչև անձը չենթարկվի դատական կամքին: Այս մոդելների կողքին ուրույն տեղ է զբաղեցնում Իտալիայի փորձը, որտեղ երկար տարիներ անուղղակի հարկադրանքի ընդհանուր գործիքի բացակայությունը հանգեցնում էր ՄԻԵԴ-ի կողմից բազմաթիվ բացասական վճիռների կայացմանը, ինչը ստիպեց օրենսդրին քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներդնել աստրենտի սեփական մոդելը: Իտալական իրավակարգը աստրենտի կիրառումը սահմանափակեց բացառապես անփոխարինելի կամ ոչ գույքային պարտավորություններով, քանի որ իտալական իրավագիտության մեջ հստակ տարանջատվում են փոխարինելի և

²¹ Indirect coercive methods in international law: Comparative analysis of Astrente and Contempt of Court // International Journal of Law (JoL). — 2018. — Vol. 11, No. 4. — էջ 36

²² Кудрявцева О.В. Особые аспекты использования астрента как способа защиты прав кредитора // Частно-правовые (цивилистические) науки. — Москва: РАНХиГС, 2022. — № 5.1.3. — էջ 14

²³ Indirect coercive methods in international law: Comparative analysis of Astrente and Contempt of Court // International Journal of Law (JoL). — 2018. — Vol. 11, No. 4. — էջ 39

անփոխարինելի գործողությունները²⁴։ Եթե գործողությունը կարող է կատարվել երրորդ անձի կողմից, ապա աստրենտի կիրառումը համարվում է ոչ տեղին, և հարցը լուծվում է հարկադիր կատարողի միջոցով, մինչդեռ դատական տույժը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ կատարումը կախված է բացառապես պարտապանի անձնական կամքից և վարքագծից։

Աստրենտի ինստիտուտի ներդրումը հետխորհրդային երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության և համանմանորեն Հայաստանի Հանրապետության իրավական համակարգերում, ուղեկցվել է լուրջ տեսական սխալներով և օրենսդրական անկատարությամբ, քանի որ օրենսդիրը, փորձելով տեղայնացնել ֆրանսիական աստրենտը, այն արհեստականորեն ներմուծել է քաղաքացիական նյութական իրավունքի դաշտ՝ կատարելով ուղղակի հղում տուժանքի կամ նեուստոյկայի ինստիտուտին։ Սա առաջացրել է մի շարք դոկտրինալ հակասություններ, որոնցից առաջինը դատական տույժի և պայմանագրային տուժանքի տեսական կոնֆլիկտն է։ Դատական քաղաքացիական իրավունքում տուժանքը պարտավորությունների ապահովման միջոց է, որը սահմանվում է կողմերի պայմանագրով կամ օրենքով՝ նախքան պարտավորության խախտումը, մինչդեռ աստրենտը չի կարող նախատեսվել պայմանագրով և հանդիսանում է բացառապես դատական հարկադրանքի միջոց, որն ուժի մեջ է մտնում միայն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց և կետանց թույլ տալուց հետո²⁵։ Սրանց նույնացումը բերում է նրան, որ դատարանները երբեմն սխալմամբ փորձում են կիրառել տուժանքի նվազեցման կանոնները՝ հիմնվելով դրա չափազանց մեծ լինելու վրա, ինչը լիովին արժեզրկում է աստրենտի խթանիչ և պատժիչ գործառնությունը։ Բացի այդ, ֆրանսիական մոդելի որդեգրումը, ըստ որի ողջ գումարը բռնագանձվում է հոգուտ կրեդիտորի, առաջացնում է իրավական անարդարություն, քանի որ կրեդիտորը, բացի իր հիմնական իրավունքի վերականգնումից, ստանում է հսկայական դրամական միջոցներ, որոնք չեն արտացոլում իր կրած իրական վնասի չափը, ինչը գործնականում կարող է հանգեցնել կրեդիտորի անհիմն հարստացմանը²⁶։ Ավելին, անբարեխիղճ կրեդիտորին տնտեսապես ձեռնառնել է դառնում, որ պարտապանը հնարավորինս երկար ժամանակ չկատարի վճիռը, որպեսզի օրական կուտակվող տույժերը վերածվեն մեծ թվերի։ Այս ամենը վկայում է աստրենտի երկակի իրավական բնույթի մասին, քանի որ ժամանակակից իրավագիտությունը հակված է դրան վերագրել խառը բնույթ. մի կողմից այն կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքով և ուղղված է մասնավոր անձի շահերի պաշտպանությանը, մյուս կողմից՝ դրա նշանակումն ու հաշվարկը կրում են զուտ գործընթացային կամ դատավարական բնույթ, և այն չի կարող գոյություն ունենալ դատական պրոցեսից դուրս²⁷։ Աստրենտն ունի ակցեսոր բնույթ, և

²⁴ Indirect coercive methods in international law: Comparative analysis of Astrente and Contempt of Court // International Journal of Law (JoL). — 2018. — Vol. 11, No. 4. — էջ 42

²⁵ Резина Н.А., Иванова Л.В. Астрент: проблемы применения // Вестник Омской юридической академии. — 2016. — № 1 (30). — էջ 22

²⁶ Indirect coercive methods in international law: Comparative analysis of Astrente and Contempt of Court // International Journal of Law (JoL). — 2018. — Vol. 11, No. 4. — էջ 45

²⁷ Кудрявцева О.В. Особые аспекты использования астрента как способа защиты прав кредитора // Частно-правовые (цивилистические) науки. — Москва: РАНХиГС, 2022. — № 5.1.3. — էջ 15

դատական տույժի վճարումը պարտապանին երբեք չի ազատում բուն պարտավորությունը բնեղենով կատարելուց կամ պատճառված վնասների հատուցումից:

Դատական պրակտիկայի համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել աստրենտի կիրառման մի շարք առանցքային գործնական հիմնախնդիրներ և օրենսդրական բացեր, որոնցից առաջինը կիրառման շրջանակների անորոշությունն է, հատկապես դրամական վեճերի համատեքստում: Այսինքն հարց է առաջանում, թե ինչու այս ինստիտուտը չի գործում դրամական պահանջների դեպքում: Օրենսդրության մեջ առկա ձևակերպումները, որոնք թույլ են տալիս աստրենտ կիրառել պարտավորությունը բնեղենով կատարելու վերաբերյալ դատական ակտերով, պրակտիկայում առաջացնում են տարրնկալումներ այն մասին, թե արդյո՞ք կարելի է դատական տույժ կիրառել սովորական դրամական բռնագանձման վճիռների դեպքում: Տեսականորեն դրամական պարտավորությունների համար արդեն իսկ նախատեսված են այլ անձանց դրամական միջոցները ապօրինի պահելու համար տոկոսների հաշվարկման կառուցակարգեր, և եթե դատարանները թույլ տան աստրենտի կիրառումը դրամական պահանջներով, դա կհանգեցնի պատասխանատվության միջոցների կրկնապատկմանը և պարտապանի անհամաչափ ծանրաբեռնմանը²⁸: Ուստի աստրենտի կիրառման շրջանակը պետք է սահմանափակվի բացառապես ոչ դրամական պահանջներով, ինչպիսիք են հողային վեճերը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, կորպորատիվ փաստաթղթերի փոխանցումը կամ մտավոր սեփականության ոլորտը, անձի ոչ գույքային իրավունքները, այդ թվում՝ պատվի ու արժանապատվության ոտնահարման դեպքերը:

Մյուս խոշոր խնդիրը աստրենտի կիրառումն է վարչական և հանրային-իրավական վեճերում, երբ պատասխանող կողմը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին է, որը չի կատարում դատարանի վճիռը, օրինակ՝ չի տրամադրում շինարարության թույլտվություն կամ չի հատկացնում հողատարածք: Բարձրագույն դատական մարմնի դիրքորոշումները այս հարցում անկայուն են և անցել են զարգացման մի քանի փուլ, որտեղ սկզբնական շրջանում դատարանները թույլատրում էին աստրենտի կիրառումը պետական մարմինների դեմ, հետագայում փոխեցին դիրքորոշումը՝ նշելով, որ քանի որ այն քաղաքացիական-իրավական պատասխանատվության միջոց է, չի կարող տարածվել վարչական հարաբերությունների վրա, իսկ ներկայիս փուլում դատարանները կրկին հակվում են դրա կիրառմանը, քանի որ պրոցեսուալ նորմերը չեն պարունակում ուղղակի արգելքներ վարչական գործերով դատական տույժ նշանակելու համար: Այստեղ գլխավոր հարցն այն է, թե ով է կրելու նյութական բեռը, քանի որ եթե տույժը վճարվում է պետական բյուջեից, ստացվում է մի անհեթեթ իրավիճակ, երբ պաշտոնյայի անգործության կամ կամայականության համար վճարում են հարկատուները, ինչը լիովին չեզոքացնում է աստրենտի կանխարգելիչ դերը:

Գործնական կիրառության մեջ լրջագույն խոչընդոտ է նաև չափի սահմանման մեթոդաբանության բացակայությունը և դրանից բխող դատական կամայականության ռիսկը: Թեև օրենսդիրը պահանջում է չափը սահմանելիս հիմնվել արդարության, համաչափության և անբարեխիղճ վարքագծից օգուտ ստանալու անթույլատրելիության

²⁸ Резина Н.А., Иванова Л.В. Астрент: проблемы применения // Вестник Омской юридической академии. — 2016. — № 1 (30). — էջ 22

սկզբունքների վրա, օրենսդրության մեջ բացակայում են որևէ հստակ տնտեսական կամ մաթեմատիկական չափանիշներ²⁹: Դատարանը կարող է ընտրել միանվագ ֆիքսված գումարի, պարբերական օրական գանձման կամ պրոգրեսիվ աճողական սանդղակի մեթոդներից մեկը, սակայն հստակ ուղեցույցների բացակայությունը հանգեցնում է նրան, որ միևնույն բնույթի գործերով տարբեր դատավորներ կարող են նշանակել կամ չափազանց սիմվոլիկ փոքր գումարներ, կամ անհավանական մեծ գումարներ, ինչը խախտում է անձի տնտեսական կայունությունը: Դատարանները պետք է հաշվի առնեն պատասխանողի գույքային դրությունը, կատարման օբյեկտիվ դժվարությունները և պատասխանողի կամքից անկախ հանգամանքները, սակայն այս չափանիշները օրենսդրական ամրագրում չունեն: Սրան գումարվում է նաև կրկնակի պատասխանատվության կամ սանկցիաների կուտակման հիմնախնդիրը, երբ, օրինակ, սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են բավականին խիստ օրենսդրական տուժանքներ, վնասների հատուցում, բարոյական վնասի փոխհատուցում և տուգանքներ, և եթե այս ամենին գումարվում է նաև դատարանի նշանակած անսահմանափակ աստրենտը, ապա պատասխանողի համար ստեղծվում է անհաղթահարելի ֆինանսական բեռ, ինչը կարող է հանգեցնել նրա սնանկացմանը և դատական ակտի ընդհանրապես չկատարմանը՝ միջոցների բացակայության պատճառով³⁰: Վերջապես, օրենսդրորեն կարգավորված չէ այն իրավիճակը, թե արդյո՞ք պարտապանն ազատվում է կուտակված աստրենտը վճարելուց, եթե կատարման տևական կետանցի պատճառով կրեդիտորը կորցրել է իր հետաքրքրությունը պարտավորության բնեղենով կատարման հանդեպ և հրաժարվում է դրանից: Տեսականորեն, քանի որ կրեդիտորի հրաժարման պատճառ է հանդիսացել հենց պարտապանի անբարեխիղճ վարքագիծը և ժամկետների խախտումը, ապա պարտապանը չպետք է ազատվի մինչ այդ պահը կուտակված դատական տույժի վճարումից, և աստրենտը այս դեպքում հանդես է գալիս որպես անձի անբարեխիղճ վարքագծի անմիջական իրավական հետևանք³¹:

Նոր օրենքում աստրենտը նախատեսվում է 117-119 հոդվածներում: Աստրենտը դատարանի կողմից նշանակվող և պարտապանից հոգուտ պահանջատիրոջ բռնագանձվող դրամական տուժանք է, որի նպատակը ոչ թե պատճառված վնասի հատուցումն է, այլ պարտապանի վրա հոգեբանական և նյութական ճնշում գործադրելը՝ նրան դատական ակտի կատարմանը հակելու նպատակով:

Հետազոտական առումով սկզբունքային է Հոդված 117-ի 2-րդ մասի կանոնը, համաձայն որի՝ պահանջատերը **պարտավոր չէ ապացուցել իրեն պատճառված վնասի փաստը**, և աստրենտի չափը որոշելիս վնասի չափը հաշվի չի առնվում: Սա հստակ տարանջատում է գծում աստրենտի և քաղաքացիաիրավական պատասխանատվության սովորական միջոցների (վնասների հատուցում, պայմանագրային տույժ) միջև: Աստրենտը կրում է դատավարական-հարկադրական բնույթ:

²⁹ Резина Н.А., Иванова Л.В. Астрент: проблемы применения // Вестник Омской юридической академии. — 2016. — № 1 (30). — էջ 23

³⁰ Տե՛ս նույն տեղում

³¹ Кудрявцева О.В. Особые аспекты использования астрента как способа защиты прав кредитора // Частно-правовые (цивилистические) науки. — Москва: РАНХиГС, 2022. — № 5.1.3. — էջ 20

Օրենսդիրը հստակ սահմանափակել է աստրենտի կիրառման շրջանակը՝ բացառելով այն քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող այն պահանջներից, որտեղ արդեն իսկ նախատեսված է տուժանքի կամ վնասի հատուցման այլ չափ: Սակայն, սպառողների, աշխատողների և հանրային ծառայություններ ստացողների (բանկերի հաճախորդների, կոմունալ ծառայություններից օգտվողների) իրավունքների պաշտպանության նպատակով, օրենքը բացառության կարգով թույլատրում է աստրենտի կիրառումը նշված թույլ կողմերի պահանջներով՝ անգամ եթե պայմանագրային հարաբերություններ են առկա:

Օրենսդրությունը սահմանում է աստրենտի կիրառման երկաստիճան համակարգ՝ նախնական և վերջնական, ինչը թույլ է տալիս ապահովել դատական վերահսկողության ճկունությունը:

1. **Նախնական աստրենտ (Հոդված 117, մաս 3).** Սահմանվում է հիմնական դատական քննության փուլում՝ որպես հայցի առանձին պահանջ: Այն կրում է կանխարգելիչ բնույթ և սկսում է հաշվարկվել դատական ակտի կամավոր կատարման ժամկետը լրանալուց հետո:
2. **Վերջնական աստրենտ (Հոդված 117, մաս 4).** Նշանակվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, եթե նախնական աստրենտ չի սահմանվել, կամ երբ կողմերի դիմումով փոփոխվում է նախնական աստրենտի չափը կամ դադարեցվում է այն:

Հոդված 118-ը մանրամասնում է տուժանքի հաշվարկման հստակ սանդղակ: Օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից ուշագրավ է, որ նախնական աստրենտի պարագայում կիրառվում է կոշտ ֆիքսված համակարգ (խախտման առաջին դեպքի/օրվա համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը, իսկ յուրաքանչյուր հաջորդ օրվա համար՝ հնգապատիկը):

Մինչդեռ, **վերջնական աստրենտի** պարագայում դատարանին վերապահված է լայն հայեցողական լիազորություն՝ սահմանելու օրական տուժանքի չափը **նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև հինգհարյուրապատիկի սահմաններում:**

Դատական հայեցողությունը սահմանափակելու և կամայականությունները կանխելու համար Հոդված 118-ի 5-րդ մասով սահմանվել են վերլուծության ենթակա օբյեկտիվ չափանիշներ.

- Պարտավորության հարկադիր կատարման իրավական և փաստացի հնարավորությունը,
- Պարտապանի գույքային դրությունը (իրավաբանական անձանց դեպքում՝ հասույթի և շահույթի չափերը),
- Պարտապանի անբարեխղճության աստիճանը,
- Պահանջատիրոջ համար պահանջի կատարման հրատապությունն ու նշանակությունը:

Աճողական աստրենտ: Օրենքը ներմուծում է «աճողական աստրենտի» գաղափարը, որի դեպքում տուժանքի չափն ավտոմատ կերպով մեծանում է կետանցի ժամկետի երկարաձգմանը կամ խախտումների քանակի ավելացմանը զուգընթաց: Սա տնտեսական հզոր խթան է պարտապանի համար, քանի որ ժամանակի ընթացքում չկատարման գինը դառնում է աստղաբաշխական:

Աստրենտի հաշվարկի փաստացի իրականացումը դրված է հարկադիր կատարողի վրա, սակայն այն օբյեկտիվորեն կասեցվում է, եթե վարույթը կասեցվել է կամ կատարումը հետաձգվել/տարաժամկետվել է օրենքի հիման վրա:

Հոդված 119-ը սահմանում է աստրենտի նշանակման և փոփոխման դատավարական ռեժիմը: Գործընթացի օպերատիվությունն ապահովելու նպատակով դիմումի վերաբերյալ առանձնակի վարույթ չի հարուցվում, այլ այն քննվում է նախկինում հարուցված դատական գործի շրջանակներում՝ հայցը քննած առաջին ատյանի կամ վարչական դատարանի կողմից՝ երկամսյա ժամկետում:

Իրավական հավասարակշռությունն ապահովելու համար օրենսդիրը նախատեսել է պարտապանի իրավունքների պաշտպանության երկու կարևոր երաշխիք.

1. **Միջանկյալ պաշտպանություն (Հոդված 119, մաս 6).** Աստրենտի չափի նվազեցման կամ դադարեցման դիմում ներկայացնելիս դատարանը կարող է ժամանակավորապես կասեցնել կամ նվազեցնել աստրենտի հաշվարկը մինչև գործի քննության ավարտը: Սա կանխում է պարտապանի սնանկացումը այնպիսի իրավիճակներում, երբ չկատարումը պայմանավորված է անհաղթահարելի ուժով կամ օբյեկտիվ անհնարինությամբ:
2. **Չարաշահման կանխում.** Եթե պարտապանի դիմումը ի վերջո մերժվում է, դատարանը պարտավոր է բռնագանձել նաև ժամանակավոր դադարեցման փուլում կուտակված ողջ գումարը, ինչը բացառում է դատավարական իրավունքների չարաշահումը պարտապանի կողմից:

**«Կատարողական թերթի» ինստիտուտից հրաժարումը եվ կատարողական վարույթի
հարուցման նոր կարգը**

Ինչպես շեշտեցինք վերևում՝ դատական ակտերի հարկադիր կատարման իրավունքը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մասը, որի արդյունավետությունից է ուղղակիորեն կախված պետության մեջ արդարադատության հանդեպ հանրային վստահությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արտայատել է ակերի կատարման կարևորությունը: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է դիտարկվել որպես անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում, քանի որ դիմողին զրկում է իր խախտված իրավունքների վերականգնման, իրեն հասանելիք դրա- մական միջոցներն ստանալու հնարավորությունից, որոնք ստանալու համար նա իրավաչափ ակնկալիքներ է ունեցել³²: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր հերթին անդրադարձել է դատական ակտերի պարտադիր կատարման պահանջին: ՄԻԵԴ-ը գտնում է, որ ցանկացած դատարանի վճռի կամ դատավճռի կատարումը դիտում է որպես 6-րդ հոդվածով երաշխավորված դատաքնության անբաժանելի մաս³³:

ՄԻԵԴ-ն անդրադառնալով դատական ակտերի կատարման հարցին՝ գտել է, որ «ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը պետք է 6-րդ հոդվածի իմաստով դիտվի որպես «դատական քնության» անբաժանելի մաս»: Եթե դատական ակտը մնում է թղթի վրա, ապա խախտվում է արդար դատաքնության իրավունքը³⁴:

Նախկին օրենքի շրջանակներում կատարողական վարույթի հարուցման հիմնական տարբերակը կատարողական թերթ ստանալն էր: «Կատարողական թերթի» ինստիտուտը ստեղծում էր բավականին բարդ ու ծավալուն ընթացակարգ՝ զգալիորեն երկարացնելով դատական ակտի կայացումից մինչև դրա իրական կատարումն ընկած ժամանակահատվածը և անհարկի ծանրաբեռնում դատական համակարգը: 2026 թվականի սեպտեմբերի 1-ից լիարժեքորեն ուժի մեջ մտնող օրենսդրական բարեփոխումները նպատակ ունեն արմատապես փոխել այս իրավիճակը՝ անցում կատարելով թվայնացված, պարզեցված և առավել արդյունավետ համակարգի:

Նախկինում գործող համակարգի համալիր վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել հստակ տարբերակված մոտեցում կատարողական տարբեր փաստաթղթերի միջև: Նախկին իրավակարգում հարկադիր կատարման հիմք հանդիսացող փաստաթղթերը բաժանվում էին երեք հիմնական տեսակի՝ կատարողական թերթը, կատարողական մակագրության թերթը և անբողոքարկելի վարչական ակտը: Այս համակարգում օրենսդիրը ցուցաբերում էր տարբերակված ու ոչ համաչափ մոտեցում. եթե վարչական մարմինների ակտերի կամ նոտարական մակագրության պարագայում հարկադիր կատարման վարույթ սկսելու համար բավարար էր հենց ինքնին ակտի կամ

³² ՄԴՈ-1330 կետ 5

³³ Burdov v. Russia, application no. 59498/00, 07/05/2002

³⁴ Hornsby v. Greece, application no. 18357/91, ECHR 1997, §40

հաղորդագրության ներկայացումը հարկդիր կատարողին, ապա դատական ակտերի դեպքում պահանջվում էր բոլորովին նոր, առանձին փաստաթղթի՝ կատարողական թերթի կազմում դատարանի կողմից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը որպես հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմք սահմանում է՝ կատարողական թերթը և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը: Այսպիսով, կատարողական վարույթ հարուցելու կամ հարկադիր կատարման ընթացակարգ սկսելու և համապատասխան հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը հանդիսանում է կատարողական թերթը: Հարկադիր կատարողն օրենքով սահմանված հարկադիր կատարման միջոցները կարող է կիրառել բացառապես կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո: Հետևաբար, քանի դեռ քաղաքացուն կատարողական թերթ չի տրամադրվել՝ հարկադիր կատարման փուլն սկսված համարվել չի կարող, եւ դրան առնչվող խնդիրներն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե հարկադիր կատարման, այլ քաղաքացիական դատավարության շրջանակներում³⁵: Կատարողական թերթն իր իրավական բովանդակությամբ սոսկ մեխանիկորեն կրկնում էր հիմք հանդիսացող դատական ակտի եզրափակիչ մասը, և միակ տարբերությունն այն էր, որ դրանում պաշտոնապես նշվում էր ակտի օրինական ուժի մեջ մտնելու փաստը: Դատական համակարգի թվայնացման և «DataLex» համակարգի գոյության պայմաններում, որտեղ դատական ակտի ուժի մեջ մտնելու տվյալներն արդեն իսկ առկա են և հանրամատչելի, քաղաքացուն ստիպել դիմել դատարան, սպասել որոշակի ժամկետների, իսկ դատարանին էլ ստիպել կայացնել որոշումներ թերթ տալու, մերժելու մասին, դարձել էր անարդյունավետ և ավելորդ աշխատանքային ընթացակարգ:

Նոր օրենսդրական կարգավորումներով «կատարողական թերթ» հասկացությունն իսպառ վերացվել է, ինչը հանգեցրել է կատարողական վարույթի հարուցման փուլի արմատական փոփոխության: Նախկինում հարուցման հիմք հանդիսացող թերթի փոխարեն այժմ վարույթը հարուցվում է անմիջապես կատարման ենթակա ակտի և պահանջատիրոջ դիմումի հիման վրա, ընդ որում՝ անհապաղ կատարման ենթակա ակտերով վարույթը հարուցվում է անհապաղ, իսկ տվյալները դատարանից Ծառայություն են փոխանցվում ավտոմատացված էլեկտրոնային եղանակով:

Միննույն ժամանակ, նոր օրենսդրությունը ներմուծել է պարտապանի իրավունքների պաշտպանության և կամավոր կատարման նոր մեխանիզմ, որը հայտնի է որպես երկշաքայի կանոն: Եթե հին կարգով պահանջատերը դատարան դիմելիս պարզապես կցում էր դիմումի պատճենը պարտապանին ուղարկելու ապացույցը, ապա նոր կարգով պահանջատերը կարող է հարկադիր կատարման դիմում ներկայացնել միայն այն բանից հետո, երբ դրա պատճենը պարտապանին ուղարկելուց անցել է առնվազն երկու շաբաթ³⁶: Սա պարտապանին տալիս է իրական հնարավորություն՝ պարտքը մարելու կամովին և խուսափելու հարկադիր արգելանքներից ու դրանից բխող հավելյալ ծախսերից:

³⁵ ՄԴՈ-1330

³⁶ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 35

Առավել հստակ են դարձել նաև կատարողական վաղեմության ժամկետներն ու դրանց վերականգնման կանոնները: Հին օրենքով բաց թողնված ժամկետի վերականգնման համար առավելագույն սահմանափակում նախատեսված չէր, սակայն նոր կարգավորումներով ամրագրվել է, որ դատական ակտերի մասով բաց թողնված ժամկետը չի կարող վերականգնվել, եթե անցել է ավելի քան 10 տարի, իսկ վարչական ակտերի բաց թողնված ժամկետներն ընդհանրապես վերականգնման ենթակա չեն³⁷: Բացի այդ, դրամական պահանջներով վաղեմության ժամկետի ընդհատման նպատակով պարտավորության մասնակի կատարման փաստն այսուհետ կարող է հաստատվել բացառապես բանկային փոխանցումը հավաստող ապացույցով, ինչը բացառում է կանխիկ վճարումների մասին կեղծ հայտարարությունները:

Որպես կարևոր ինստիտուցիոնալ նորամուծություն՝ օրենքում ներդրվել է ածանցյալ կատարողական վարույթի գաղափարը: Եթե հին կարգով հարկադիր կատարողը հիմնական վարույթի շրջանակներում էր որոշումներ կայացնում երրորդ անձանց որոշակի գործողություններ պարտավորեցնելու մասին, ապա այժմ, երբ որոշումը վերաբերում է վարույթի կողմ չհանդիսացող անձին, հարուցվում է առանձին ածանցյալ վարույթ, որտեղ հիմնական պահանջատերը չի մասնակցում³⁸: Սա հստակեցնում է երրորդ անձանց իրավունքների պաշտպանության, գործողությունների կատարման և բողոքարկման իրավական սահմանները:

Այսպիսով, դատարան-հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ամբողջական էլեկտրոնային փոխգործելիության վրա հիմնված այս բարեփոխումը հանդիսանում է համակարգային և արդիական քայլ: Կատարողական թերթի իսպառ վերացումը լիովին բխում է դատական պաշտպանության իրավունքի էությունից, քանի որ այն բեռնաթափում է դատական կազմերին տեխնիկական աշխատանքից, խնայում է ահռելի պետական ռեսուրսներ, պարզեցնում է քաղաքացու ճանապարհը դեպի արդարադատության վերջնական իրականացման և վերացնում է տարիներով գոյություն ունեցած օրենսդրական անհամաչափությունները:

Ինչ վերաբերում է կատարողական վարույթի միջոցներին, ապա հին և նոր օրենսդրության առանցքային տարբերությունը նկատելի է հենց հարկադիր կատարման միջոցների հայեցակարգային ցանկում: Մինչ հին օրենքը սահմանափակվում էր հիմնականում գույքային բռնագանձմամբ, առարկաների առգրավմամբ կամ օբյեկտների կապարակնքմամբ, նոր իրավակարգը ներմուծում է սկզբունքային նոր միջոցներ, ինչպիսիք են պարտավորությունը պարտապանի փոխարեն կատարելը (եթե այն անձնական բնույթ չի կրում), արգելված գործողությունները կանխող կամ արձանագրող տեխնիկական միջոցները և ֆիզիկական հարկադրանքը: Ավելին, ուղղակիորեն ամրագրվել է մեկ վարույթով մի քանի միջոցների միաժամանակյա կիրառման հնարավորությունը, ինչը մեծացնում է գործընթացի օպերատիվությունը³⁹:

³⁷ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 36

³⁸ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 39

³⁹ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 41

Նոր իրավակարգի ամենահեղափոխական դրույթներից է հարկադիր կատարողին պարտապանի անունից և նրա փոխարեն գործելու լիազորության վերապահումը⁴⁰: Հին համակարգում հարկադիր կատարողը չունեի նման իրավական հնարավորություն. նա սոսկ պահանջում էր գործողության կատարում, իսկ չկատարելու դեպքում կիրառում տուգանք: Այժմ հարկադիր կատարողն օրենքի ուժով հանդիսանում է պարտապանի ներկայացուցիչը և իրավասու է ողջամիտ ծավալով նրա փոխարեն կնքել գործարքներ, ներկայացնել դիմումներ պետական մարմիններին, իրականացնել շինարարական կամ քանդման աշխատանքներ: Սա արմատախիլ է անում պարտապանի կողմից գործընթացը միտումնավոր չկատարելու պրակտիկան:

Սկզբունքային փոփոխություններ են կատարվել նաև բնակարան կամ այլ շինություն մուտք գործելու ընթացակարգերում: Եթե հին օրենքով հարկադիր կատարողն ուներ պարտապանին պատկանող բնակարան անարգել մուտք գործելու ընդհանրական իրավունք⁴¹, ապա նոր օրենքը հստակեցնում է սահմանները և ներմուծում է դատական վերահսկողության խիստ մեխանիզմ երրորդ անձանց մասով: Եթե շինությունը պատկանում է այլ անձի, և վերջինս չի տալիս իր համաձայնությունը, հարկադիր կատարողը պարտավոր է դիմել դատարան⁴²: Դատարանն այս դիմումը քննում է 10-օրյա ժամկետում՝ առանց նիստ հրավիրելու, և թույլտվություն է տալիս միայն այն դեպքում, եթե հիմնավորվում է գործողության անհրաժեշտությունը, պիտանիությունը և համաչափությունը: Այսպիսով, երաշխավորվում է անձի բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը:

Վերջապես, անձի և գույքի հետախուզման, ինչպես նաև ՀՀ տարածքից ելքի իրավունքի սահմանափակման մեխանիզմները նոր օրենսդրությամբ ամբողջությամբ համակարգվել և կապակցվել են սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի հետ: Ոչ դրամական պահանջներով, երբ ակտի կատարումն անհնար է առանց պարտապանի անձնական մասնակցության, դատարանի որոշմամբ սահմանափակվում է նրա ելքը երկրից, ինչն անհապաղ՝ 24 ժամվա ընթացքում, արտացոլվում է սահմանային համակարգում: Իսկ ծայրահեղ դեպքերում, երբ առկա է բացահայտ դիմադրություն կամ խոչընդոտում, հարկադիր կատարողին օրենքով իրավունք է վերապահված կիրառելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն, ինչը հին օրենքում նման հստակեցմամբ կանոնակարգված չէր⁴³:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ հարկադիր կատարման նոր միջոցներն ու դրանց կիրառման դատավարական երաշխիքները ստեղծում են կոռ, հավասարակշռված համակարգ: Օրենսդրական այս էվոլյուցիան մի կողմից բացառում է պարտապանի անպատժելիությունն ու պարտավորություններից խուսափելու հնարավորությունը, իսկ մյուս կողմից՝ դատական վերահսկողության միջոցով ապահովում է երրորդ անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

⁴⁰ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 43

⁴¹ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենք, հոդված 43.1

⁴² «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 46

⁴³ «Կատարողական վարույթի մասին» օրենք, հոդված 47, 48, 49

Եզրակացություն

«Կատարողական վարույթի մասին» ՀՀ նոր օրենսդրական կարգավորումների համակողմանի իրավական վերլուծությունը հնարավորություն է տալիս ձևակերպել ամբողջական և համակարգված եզրահանգումներ դրանց էության, գործնական նշանակության ու արդիականության վերաբերյալ: Օրենսդրական առանցքային նորամուծությունն այն է, որ կատարողական վարույթն այսուհետ հստակորեն որակվում է որպես վարչական վարույթի հատուկ տեսակ, ինչը վերջ է դնում տարիներ շարունակ գոյություն ունեցող դոկտրինալ բանավեճերին և թույլ է տալիս հարկադիր կատարման ամբողջ ընթացակարգի վրա ուղղակիորեն տարածել պատշաճ վարչարարության հիմնարար սկզբունքները՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը: Այս համատեքստում օրենսդիրը հաջողությամբ հաղթահարել է նախկին տեքստային ավելորդ ծանրաբեռնվածությունը՝ անցում կատարելով հարկադիր կատարման ենթակա ակտերի ունիֆիկացման ամբողջական մեթոդին, որտեղ սնանկության եզրափակիչ ակտերի, միջանկյալ դատական որոշումների, Սահմանադրական դատարանի ակտերի և հենց հարկադիր կատարողի սեփական որոշումների ներառումը էապես բարձրացնում է դատական պաշտպանության օպերատիվությունը:

Աշխատանքի առանցքային արդյունքներից է սուբյեկտային կազմի արդիականացման և «պարտապանի կոնտրագենտների» ու «գրանցող մարմինների» ինստիտուտների բացահայտումը: Տնտեսության թվայնացման արդի պայմաններում, երբ պարտապանների ակտիվները դուրս են եկել ավանդական սահմաններից, նոր օրենքը վերահսկողության տեսադաշտ է բերում թվային դրամապանակները, վիրտուալ ակտիվները, խաղային ոլորտի սուբյեկտները և վճարահաշվարկային կազմակերպությունները՝ նրանց վրա դնելով բարեխղճորեն գործելու և տեղեկատվության անվերապահ տրամադրման պարտականություն: Մա ամբողջությամբ լրացնում է նախկինում առկա այն լուրջ օրենսդրական բացը, երբ արտերկրից ուղարկված միջոցները ձևակերպվում էին որպես արագ փոխանցումներ կամ մնում էին տարանցիկ ու միջանկյալ հաշիվներում՝ խուսափելով ավտոմատ արգելանքներից: Այս նորամուծությունների շնորհիվ ստեղծվում է շահերի ողջամիտ հավասարակշռություն, որտեղ կողմերի սուբյեկտիվ իրավունքների ընդլայնումը հանգեցրել է նաև վարույթում ներկայացուցչի ֆունկցիոնալ դերի հայեցակարգային փոփոխության՝ նրանից պահանջելով բացառապես ակտիվ, ապացուցողական և հիմնավորված դատավարական գործունեություն:

Հետազոտության կարևորագույն հիմնահարցերից է պատասխանատվության համակարգի արմատական վերափոխումը, որն ավանդական «պատժիչ» և կոշտ ֆիքսված մոդելից անցում է կատարել դեպի կատարումը խթանող ու պարտապանի վրա աստիճանական ճնշում գործադրող ճկուն մեխանիզմների: Այս փոփոխության վառ արտահայտությունն է ոչ դրամական պահանջները չկատարելու համար նախատեսված տուժանքի՝ աստրենտի ինստիտուտի ներդրումը, որն իր դասական տեսքով հանդիսանում է եվրոպական առաջադեմ իրավակարգերի արդյունք: Աստրենտն ունի ուրույն դատավարական-հարկադրական բնույթ, և դրա ներդրումը հետխորհրդային տիրույթում ուղեկցվել է որոշակի դոկտրինալ հակասություններով, հատկապես այն քաղաքացիական նյութական իրավունքի սովորական տուժանքի հետ նույնացնելու և կրեդիտորի անհիմն հարստացման ռիսկերի համատեքստում: Այնուամենայնիվ, նոր օրենքով սահմանված նախնական, վերջնական և ժամանակի ընթացքում ավտոմատ կերպով մեծացող «աճողական աստրենտի» երկաստիճան դատավարական ռեժիմը, ինչպես նաև դատական

հայեցողությունը սահմանափակող օբյեկտիվ չափանիշները (պարտապանի գույքային դրությունը, անբարեխղճության աստիճանը և պահանջի հրատապությունը) թույլ են տալիս խուսափել դատական կամայականություններից: Դատական տույժի այս համակարգը, համադրվելով կատարողական ծախսերի ու վճարների նոր, տարբերակված ճկուն սանդղակների հետ, ստեղծում է տնտեսական հզոր խթաններ պարտավորությունների կամովին և շուտափույթ մարման, ինչպես նաև հաշտության համաձայնությունների կնքման համար: Վերջնարդյունքում, «Կատարողական վարույթի մասին» նոր օրենսդրությունն ապահովում է անցումը կռպիտ ֆիզիկական հարկադրանքից դեպի տնտեսական ինելամիտ խթանում և հարկադիր կատարողին օժտում է արդյունավետ իրավական լծակներով՝ երաշխավորելով իրավունքի գերակայությունն ու արդարադատության վերջնական իրացումը Հայաստանի Հանրապետությունում:

Գրականության ցանկ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով):
2. «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենք:
3. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (ուժը կորցրած):
4. Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Կուդրյավցևա Օ.Վ., Օստրիե ասպեկտի իսպոլզովանիյա աստրենտա կակ սպոսոբա զաշչիտի պրավ կրեդիտորա // Չաստնո-պրավովիե (ցիվիլիստիչեսկիե) նաուկի. — Մոսկվա: ՌԱՆԻԻԳՍ, 2022. — № 5.1.3. — Ս. 13-21: (Кудрявцева О.В. Особенности использования астрента как способа защиты прав кредитора)
2. Ռեզինա Ն.Ա., Իվանովա Լ.Վ., Աստրենտ: պրոբլեմի պրիմենենիյա // Վեստնիկ Օմսկոյ յուրիդիչեսկոյ ակադեմիի. — 2016. — № 1 (30). — Ս. 20-25: (Резина Н.А., Иванова Л.В. Астрент: проблемы применения)
3. Indirect coercive methods in international law: Comparative analysis of Astrente and Contempt of Court // International Journal of Law (JoL). — 2018. — Vol. 11, No. 4. — Pp. 35-48. (Անուղղակի հարկադրանքի մեթոդները միջազգային իրավունքում. Աստրենտի և Դատարանի նկատմամբ արհամարհանքի համեմատական վերլուծություն)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

1. Եվրոպական պայմանագրային իրավունքի օրենսգիրք (Principles of European Contract Law):
2. ՈՒՆԻԴՐՈՒՄ-ի Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներ (UNIDROIT Principles of International Commercial Contracts):
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկա և նախադեպային որոշումներ (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում):